զի քրիստոնեայք էին 'ի մեծի տառապանս և 'ի նեղութիւնս, և ոչ ոք եթող գրով զկնի իւր զոր ետես և լուաւ, թէ որպիսի անցք անցին 'ի վերայ ազգաց և ժողովրդոց, միայն ասէ գտանեմք 'ի գիրս Տոսիդիոսի տակ անուանս ոմանց Պատրիարքաց (1423)։

Գրէ նաեւ Սամուէլ Անեցի թէ՝ յիշխանութեան Իսքենտէրին, 'ի պարանութեան Սուլթան Ահմէտին · 'ի Կաթուղիկոսութեան Տ · Պօղոսին, Ս · Յարութեան դուռն 2 ամ փակեալ կայր։

ԳԼՈՒԽ ԼԲ ·

Մարտիրոս Պատրիարք Եգիպտացի։ Գրաւումն Գողղոթայի 'ի Վրաց։ Դատաստանք յաւանս Եգիպտոսի։ Մեծամեծ ջանք Մարտիրոսի։ Հրամայագրակ և դատաստանագիրք։ Ի վերջոյ կորուստ իրաւանց · և շինութիւն եկեղեցւոյն Վէրմասան։

Յետ ընտրութեան Պօղոս վարդապետի յԱթոռ Կաթուղիկոսութեան Սսոյ · յաջորդեաց իշխանութեան Պատրիարգութեան Երուսաղէմի, Տ · Մարտիրոս Արք եպիսկոպոս Եգիպտացի, որպէս ցուցանէ գաւազանագիր սոյն Աթոռոյ։

Սա նորոգեաց զեկեղեցին Ս · Աստուածածնի որ 'ի Գեթսէմանի, սալիւ յարդարելով զյատակն և զտանիսն, որոյ յիշատակարանն գրեալ կայ ասէ Հաննայ վարդապետ յաջակոցն արտաքին դրան, 'ի թուին Հայոց ՊՀ · (1421)։ Պարտ · Երուսաղէմ · Երես 304։ Սակայն չերեւի այժմ արձանագրութիւնն այն · զի զմեծ և զգեղեցկաշէն փառաւոր կամար դրանն տաճարին քարամբք հիւսեալ անձկացուցին զմուտն, յերկիւղէ աւազակաց, ուստի կամ ջընջեցաւ և կամ ծածկեցաւ 'ի ներքոյ քարանց։

Յաւուրս սորա ասատկացաւ վէճն ազգին Վրաց վասն Գողգոթայի տեղւոյն 'ի տաճարի Ս · Յարութեան, որ լեալ էր սեփհական վիճակ ազգին Հայոց, որպէս պատահեալէր յաւուրս Գրիգորի եւ Սարգսի, յորս հանդիպեցան Հայք